

“ Գործնական խնդիրը սա է թե՛
Նիդդերա ինչ պիտի ընէ այս պարա-
դայից մէջ : Ի՞նչու Սարիսպլըրի խնդ-
րեղութիւնի և իր խոստովանի թէ ներ-
կայ անիշխանական սոսկալի վիճակին
շարունակութիւնը թոյլատրել կարելի

լի չէ : Թուրք կառավարութեան այն
զանգաւոր, զոր ձանձրացնելու չափ
կը կրկնեն վեհ. թագուհւոյն նա-
խարարները, սա է թէ. «Դրամ մու-
նիքը և բարենորոգում չեմք կրնար
ընել » . որ ըսել է, « Դրամ մուէք
մեզ, կամ աւելի ճիշդը, կաշառք
տուէք մեզ, և յայնժամ բարենո-
րոգում կընեմք, կամ մանաւանդ կը
խոտախմբէ ընել » Այս երկիրն
(Թուրքիան) և թուրքերը ճանաչող
մարդու մը համար այդպիսի անտե-
ղի առարկութիւն մը լսել զգուշիկ է :
Դիցուք թէ ինչ ինչ բարենորոգում
ներ չեն կրնար առանց դրամի դու-
րադրելու բայց շատ բարենորոգումներ
կան որ առանց դրամի կրնան լինել,
և սակայն դաննք դուրծողներու
համար ձեռնարկութեան մը ստուերն
անդամ չտեսնուեցաւ : Եթէ Դուռն
այս դիւրին բարենորոգումները դու-
րադրելու համար գեղեցիկութիւն
ունի, միթէ դրամ ձեռք անցուցած
ժամանակ միւս բարենորոգումնայ հա-
մար յօժարակամութիւն պիտի ու-
նենայ, և այն դուրմարը բարենո-
րոգման պիտի գործածէ : Դուռը
կամ բարենորոգում կուզէ, կամ ոչ,
եթէ կուզէ, ինչն համար չգործադ-
րելու դաննք զոր այժմէն իսկ կրնայ
գործադրել. իսկ եթէ չուզէր, ա-
պա ուրեմն պէտք է յայտնէ թէ ի-
րեն ոչ թէ դրամ, այլ կամք կը պահ-
սի : Միթէ դրամը կարօտ է մայրա-
քաղաքին մէջ խռնուած մնացած
զօրաց մէկ փոքր մասն Ատաբազար
զրիւղ, որ հազիւ 100 մըն հեռի է,
որպէս զի զսպին այն Զէքեղներն,
որք այդ բարեբեր դատուն անա-
պատ կը դարձնեն : Միթէ դրամը
կարօտ է Հայոց ինչքն յափշտակելով
կամ պատիւը բռնաբարելով բանտ
ձգուած ֆիւրտ պէյերէն մի քանին
ընթացակարգ պիտի լինի : Միթէ դը-
րամը կարօտ է գողութեանց և խա-
ղախութեանց շնորհիւ պարարտաց-
եալ թշուառական Տէֆթէրտարներ-
էն, որոց հաւաքներէն և ուրիշ
նմանօրինակ պաշտօնատարներէն մի
քանին պատժել : Միթէ դրամը կա-
րօտ է քանի մը պարզ օրէնքներ հը-
րատարակելով շահարկութեան բա-
նալ հանքերն ու երկրին ուրիշ հա-
րատութեան աղբիւրներն, որք դիւ-
մամբ փակեալ կը թողուին այս պատ-
ճառաւ թէ Թուրքերն Եւրոպայի
տարբին չափազանց մեծ թուով Թուր-
քիոյ գործոց մէջ մտնելէն կը վախ-
նան :

Ժամանակն եկած է այլ ևս, Տէր,
որ մեր (Անդղիստոյ) ամենէն աւե-
լի թուրքասէր պաշտօնատարներն
իսկ սկսին հասկնալ թէ Անգղիոյ ար-
դի մեզմէ գեղեցիկ աշխարհավարու-
թիւնը գործի չգար, և ուրիշ միջոց-
ներու պէտք է գիտնել : Թուրքաց
կառավարական տարրը ճանաչող ամեն
ոք գիտէ թէ զանոնք գործելու ըս-
տիպելու համար կամ կաշառք տա-
լու է և կամ աշքերնին վախցնելու
է : Ինչպէս կը թուի թէ այս դու-
րը կաշառքով չպիտի քալէ, որով
հետեւ այնքան անգամ կաշառք տալ
հարկ պիտի լինի, որ անշուշտ Անգ-
ղիացոց հաճելի չլինար թուի : Ու-
րեմն կը մնայ Թուրքաց աչքը վախ-
ցնելու դուրսիւնը : Թուրքիոյ խոր-
հուրդներուն մէջ թող այսուհետեւ
Անգղիոյ ձայնը փայփայիչ դիւանա-
գիտի մը ձայնը չլինի, այլ իրաւ Մեն-
տորի մը ձայնը : Թող Անգղիա այսու-
հետեւ այն կերպիւ չգործէ, որպէս թէ
երկրին համար բարեւոյ միակ յոյսը
բռնապետական կառավարութեան
մը պահպանութեանը վրայ կը կայա-
նայ, թող իմացնէ Սուլթանին կա-
ռավարութեան պաշտօնէն որ եթէ
ընթացքին չուզեն, իրենց համար

Նեմեսիս* մը կայ ժողովրդային տար-
բին մէջ, որ կրնայ օր մը տանջալիւ
արդի բռնապետութիւնը : Ժամ է
որ Անգղիա այդպիսի բռնապետա-
կան կառավարութեան մը յարատե-
նեցուկը լինելէ դադրի : Բնականա-
բար պիտի ըսուի թէ այդպիսի աշ-
խարհավարութեան մը հետեւանքը
Թուրքիան Ռուսիոյ բազկաց մէջ նե-
տել պիտի լինի : Բայց ներամիտ դի-
տողներ համոզուած են որ այս բանն
արդէն եղած է : Արդէն իրեն ստոյգ-
կրնայ համարուիլ թէ Թուրքիոյ կա-
ռավարող տարրին նպատաւոր է Ռու-
սիոյ հետ միանալ, և թէ վաղ կամ
անագան այդպէս պիտի լինի, որով-
հետեւ Թուրքերն յայնժամ կրնան
ժամանակ մ'անապարէզ կարգաւ Անգ-
ղիոյ և չուտով չբարեկարգել զիրենք
Անգղիոյ խօսքերուն չհնազանդելու
համար : Բայց, Տէր իմ, այդ կառա-
վարական տարրն ո՞րքան չուտով դի-
մալը նետէ և Ռուսիոյ հետ միանայ,
իւր շքոյն մնացած մասն ալ այնքան
չուտով պիտի կորուսանէ, և ժողո-
վուրդն այլ ևս չլինալով տոկալ, պի-
տի կործանէ այդ կառավարութիւնը :
Անգղիա իմ փաստաբանած աշխար-
հավարութեան հետեւելով, ժամա-
նակ մը կրնայ իւր գիտաւարութիւն-
ները ձեռք չբերել, բայց վերջապէս
պիտի յաջողի, և գոնէ զինք իրենց
երբեկարելի փրկելը նկատող միջոցա-
ւոր ժողովրդոց, որոց նկատմամբ ար-
դարեւ բարոյական ծանր պատասխա-
նատուութիւններ ստանձնած է, ցու-
ցած պիտի լինի թէ այլ ևս անոնց հա-
րատահարաց կողմը չպիտի բռնէ,
այլ ուրիշ երկիրներու մէջ եղածին
պէս՝ Թուրքիոյ մէջ ալ հարստահա-
րելոյն բարեկամն և հարստահարչին
թշնամին պիտի լինի » Զերդ . . .
1879 Յուլի 7 Մատակն մը
Կ. Պոլիս

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 24 յուլիս .
Լորտ Սալիսպըրի տեղեկութիւն տա-
նալ թէ նոր Խոփիլէն հաստատութեան
հրովարտակին պատճէնը Սըր Հէնրի Լէ-
յարտի և Պ. Ֆուրնիլի հաղորդուած է :
Դուռն ինկատ առելով այս իրողու-
թիւնը թէ յիշեալ հրովարտակին հաղորդ-
ուիլը տրամադրող կայսերական հրամա-
նագիրն Անգղիոյ գեղականին այս մասին
ներկայած ծանուցադրէն առաջ էր թը-
ւակածի կարգաւ, յայտարարեց թէ յիշ-
եալ ծանուցադրին իրեն չեղեալ կը նը-
կատէ :

Այս տարած հետաքրքրէ :

Լոնտոն 24 յուլիս .

Պէրլինքն Սթանտարտ լրագրին կը
հետադրեն թէ Եգիպտոսի Խոփիլ թէվիֆիդ
փաշան յայտարարել է թէ իրեն անհը-
նար է կառավարել զԵգիպտոս թէ ա-
ռեւորական դաշնադրութիւններ կընելու
համար պէտք եղած իշխանութիւնը չու-
նենայ : Յիշեալ հետադրելը կը յարէ թէ
Թուրքական և Եգիպտական պատուիրա-
կաց միջև բանակցութիւնը այս շարժու-
պիտի սկսին Կ. Պոլսոյ մէջ :

Աթէնք 24 յուլիս .

Պ. Չայմիս և Պ. Թրիքուրիս, որոց
յանձնուած էր նոր նախարարութիւն մը
կազմելու պաշտօնը, երեսփոխանաց ժո-
ղովոյ ներկայ չընտնիլ փակուած խնդրե-
ցին, բայց թագաւորն իրենց այս խնդ-
րին ընդունած չլինելով, նոր նախա-
րարութիւնը կազմել չուզեցին : Հետեւ-
բար, թագաւորն հրաւիրեց Պ. Քու-
մուտուրուս որ իւր պաշտօնը շարունակէ :
Պ. Քումուտուրուս այս իրիւնն նա-
խարարներն ի խորհուրդ կը գումարէ :
Նիոս — Եօքք 25 յուլիս .

Դեղին տեղը Մէմփիսէն զատուելի տե-
ղեր ալ երևան ելաւ . այսինքն Լուի-
* Դիցարանութեան մէջ Արդարու-
թեան Աստուածն է :

վիլ, Պրօքլին և Ֆուրքէքէն : Անթի-
եան կղզիներէն եկող նաւերուն մէջ ալ
այն հիւանդութենէն բռնուած շատ մար-
դիկ տեսնուեցան :

Լոնտոն 24 յուլիս .

Օտ. Քոնս.	1863	45 1/4
Փոլս.	1869	44 1/2
»	1871	55 3/4
»	1872	24
»	1873	43 1/2
»	Կղկոյտ.	72 1/2
Անգլ. Քոնս.	98	1/8

Փարիզ 24 յուլիս .

Օտ. Քոնս.	12
Պոլս. Քոնս.	50/0
»	»
»	»
»	50/0
»	118, 2 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Նախարարական տաղնապը տու-
տուն կը շարունակէ : Զորք քաղաքի
օրը Մեծ-Եգարքոս խաղէտալին փա-
շան և միւս նախարարք վեհ. Սուլ-
թանին ներկայացան, և խաղէտա-
լին փաշային հրաժարականը խոր-
հրդակցութեանց նիւթ եղաւ, բայց
որ և է որոշում չկրցաւ տրուիլ :
Խաղէտալին փաշան իւր պաշտօնը
կարենալ շարունակելու համար ինչ
ինչ առաջարկութիւններ ներկայած
էր, որոց բարեփոխումը կուզէին միւս
նախարարք : Վեհ. Սուլթանն երկու
կողման ալ գաղափարներն հասկցած
լինելով, կըսուի թէ վերջնական որո-
շումն ինք պիտի տայ :

Առ այժմ նախարարք ճէվաթ
փաշային առժամանակեայ նախագա-
հութեան ներքեւ ընթացիկ գործե-
րը կը անօրինեն : Ճէվաթ փաշան
երէկ վեհ. Սուլթանին ներկայացաւ,
և Ն. Ի. վեհափառութեան հետ
երկար խորհրդակցելէ ետեւ, Բ.
Դուռը վերագաւառելով նախարարաց
խորհրդին նախագահեց :

Մայրաքաղաքիս դեպքանատանց
միջոց եկած հեռագիր մը կը ծանու-
ցանէ թէ Եւրոպայի մէջ, որոյ մե-
տերն անցեալ տարի Ալպանիացիք
Մէհմէտ Ալի փաշան սպաննեցին,
Մահմետական և քրիստոնեայ Ալպա-
նիացոց միջև արիւնուռչտ կռիւ մը
տեղի ունեցեր է : Այս եղելութիւնն
Աւստրիական կառավարութեան հա-
մար մեծ կարեւորութիւն ունենալուն
պատճառաւ, կըսուի թէ Չիլի կոմնը
բացատրութիւն ինքզինքն է Բ. Դրնէն,
որ պատասխանել է թէ այդպիսի ե-
ղելութեան մը վրայ տեղեկութիւն
չունի, և ստուգելու համար պէտք
եղած տեղերն հեռագրեր քաշել է :

Վերջին օրերս կայսերական երեք
մեծ շոգենաւեր մայրաքաղաքէս
զօրք և ուղարկուելու հետեւին Հե-
լենական սահմանադրուած տանելու
համար, բայց կըսուի թէ հակառակ
հրաման ստացած լինելով՝ չպիտի
մեկնին :

Միւսթաֆօղլան իրենց տունե-
րը զրկուած լինելով, անոնց ընդհա-
նուր հրամանատար ֆէրիք Հիւսէյին
փաշային մասնաւոր հրամանատարու-
թիւն մը յանձնուեցաւ Մէլանիկի
կայսերական զօրաւանակին մէջ :

Իւսքիւպէն կը գրեն թէ յիշեալ
քաղաքին շրջակայները Պուլլաք
7000 հատ Հէնրի Մարթինի հըրա-
ցան ծախքն են Ալպանիացոց երկուք-
տկան մեծխալէ գնով : Այս հրացան-
ներն ինչպէս գիտեն ընթերցողք
վերջին պատերազմին ժամանակ Օս-
մանեան զօրքն առնուած են :

Եւրոպական լրագրաց տուած
տեղեկութեանց նայելով, նախորդ
խաղի իմացիլ փաշան բաղմունու-

թեան կողմանէ Սողոմոն իմաստուն
թագաւորին հետ կրնայ եղեր մրցիլ :
Իմացիլ փաշան իւր Հարէմին մէկ
մասը հետն առած և մէկ մասն Ե-
գիպտոս թողած էր . Եգիպտոսի մէջ
գտնուած մասը վեց հարիւր կին և
աղջիկէ աւելի է . իսկ հետը հարիւ-
րէն աւելի կին ու աղջիկ տարած է
առանց ի հաշիւ տունլու անոնց ծա-
ւաներն : Այժմ նախորդ Խոփիլ մեծ
գեղեցիկութիւն կը քաշէ եղեր հե-
տը գտնուած չորս հարիւրէն աւելի
անձանց բնակութեան յարմար ա-
պարանք մը գտնել նախօրէին մէջ կամ
շրջակայները, և ստիպուած է եղեր
նախօրէին առահանդիստն երկաթ նե-
տած Եգիպտական Մահմուտէ շոգե-
նաւը բնակիլ մինչև որ ընդարձակ ա-
պարանք մը կարենայ գտնել :

ԷՍԶԱՄԸ ՌԻՄՈՒՄԻԷ

Կրէկ իրիկուէ ցօցուեցաւ	42,99
Այս առաւօտ բացուեցաւ	12,31
Կէս օրին	42,34
Բաւիլի երկաթուղի	Քր. 45,50
Թղիսի արտ.	Ժր. 40,25

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹԻՈՅ

12 Յուլիս	
Ստիլիս Է. ժէնըրալ բաժ. Անգլ. Վր. 4,40	
» ֆոխանակութեան »	3,18
Կ. Պոլսոյ Պաշտօնի »	6,25
Քրէտի ժէնըրալ »	4,12
Փոլս. 1863	Յր. —
» 1865 »	73
» 1869 »	70
» 1872 »	21 1/4
» 1873 »	65

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅ

13 Յուլիս	
Անգլ. Վր. »	109 24
Նախօրէին օրի »	87 24
Խոփիլ իւր »	89 34
Գլուխ »	51 20
Մէհմէտի տարբերութիւն »	6 20
Հիւլիս »	48
Մէլալ »	48
Պրիս »	310

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Փարիզի Օսմանեան դեպքանա-
տունն հետեւեալ տեղեկութիւններն
հաղորդած է Գաղղիական լրագրաց .

« Թուրքիոյ դեպքանատունն ե-
կած հեռագիր մը կը ծանուցանէ թէ
Կարնոյ մէջ յուլիս 14ին երկուշաբ-
թի օրը քաղաքին բնակիչներէն ինչ
մը Հայեր այլ և այլ տեղեր Պարսիկ
հպատակաց վրայ յարձակելու և ա-
սոր վրայ Հայոց ու Պարսկաց միջև
կռիւներ տեղի ունեցել են, որք
կրնային ցուալի հետեւանքներ ու-
նենալ եթէ Օսմանեան իշխանութիւնը
բարեկարգութիւնը վերահաստատե-
լու համար չլիզամուէին : Այս դու-
րին վրայ քննութիւն մը բացուած է,
որուն արդիւնքը դեռ յայտնի չէ :

« Այս անկարգութիւններն յա-
րուցանողներուն յաւաք բերած պա-
տրուակը Պարսիկ մը Հայ աղջկան մը
պատիւը բռնաբարելէն եղեր : Սա-
կայն գիտելու է որ իշխանութիւնն
այս բանն իմացածին պէս փութա-
ցեր էր յանցաւորը բռնել, որ եր-
կուշաբթի օրը տեղի ունեցած դէպ-
քերէն հինգ օր առաջ բանտարկ-
ուած էր :

« Այս դէպքն ուրիշ պատճառներ
չէ ունեցած, ոչ ալ աւելի մեծ հա-
մեմատութիւններ : Մնաց որ ըստ
այդ տեղերն անտեղեկութեամբ հան-
դարութիւն կը տեսնուի :

« Տէլիլի փաշան կը ծանուցանէ
թէ Տէլիլի անհնազանդ երկիրը կա-
տարելապէս խաղաղած է :

« Միւս կողմէն վանայ վիլայէթին
քանի մը ցեղերն, ինչպէս Մոսկանք
ևս, որք երբեմն չէին ուղած արոց
հաւաքներն ընդունիլ, յայտնեցին
թէ կայսերական կառավարութեան

ամեն պահանջները դռնակներու յօ-
ժար և պատրաստ են :

Փարիզի Օմանեան դեսպանու-
տան հրատարակած այս եղբայրութեանց
մէջ դիտողութեան արժանի քանի
մը կէտեր կան : Նախ՝ հաստատուած
է թէ Կարնոյ մէջ ծագած վեճին շար-
ժառիթը Պարսիկներն եղած էին և
ոչ թէ Հայք նախաձեռնութիւն ու-
նեցած : Երկրորդ՝ ոչ թէ կառավա-
րութիւնն ինք վնասած ու ձերբա-
կալած է յանցաւորն, այլ թաղին Հայ
բնակիչներն յանցաւոր Պարսիկը բռն-
նելով կառավարութեան յանձնած
են :

Իսկ գալով այն խօսքին թէ Կար-
նոյ շրջակայները կատարեալ հանգա-
տութիւն կը տիրէ, թէ Տէրսիմ խա-
ղաղացած է և թէ վանայ նահանգին
Քիւրդ-ցեղերն հպատակութիւն
յայտնած, ասոնք յաճախ բռնած
պաշտօնական յայտարարութիւններ
են, որոց վրայ հարկ կը համարիմք
Պարսիկաբարանի ուղարկութիւնն
հրաւիրել, որպէս զի պէտք եղած
տեղեր ճիշդ և մանրամասն տեղե-
կութիւններ տալէ ետ չկենայ :

Քարերդէն յուլիս 5 թուով Լէ-
վանթ Հէրայտ լրագրին ուղղեալ նա-
մակ մը Տէրսիմի Գիրտերուն վիճա-
կը քննելու պաշտօնով անցեալ տա-
րի խարբերդու կողմերը զրկուած
յանձնախմբին վրայ խօսելով, հե-
տեալ ուղարկութեան արժանի խօս-
քերը կըսէ .

«Այս յանձնախմբին անդամնե-
րէն մին՝ Երզնկայի կիրակոս էֆէնտի
Ղալանձեան, հաղուադիւտ կարո-
ղութեան ու պարկեշտութեան տէր
անձ մ'է : Օմանեան վերջին խորհրդ-
դարանին մէջ իւր անունն ամենէն
աւելի յիշուած անդամն էր : Բարե-
կարգութեան պէտք ունեցող զեղ-
ծումներուն կատարելապէս տեղեկ
է, և յանձնախմբի մը մէջ պաշտօն
վարելու համար երկրին ամենայնա-
մար մարդերէն մին է, բայց ինչպէս
որ թուրքիոյ մէջ յաճախ կը պատա-
հէ, կիրակոս էֆէնտին հեռացուցին
յիշեալ յանձնախմբէն ճիշդ այն մի-
ջոցին՝ յորում՝ կատարելապէս կարող
էր օգտակար դեր մը կատարել : »

Մեծաւ բերկրութեամբ կը լսեմք
թէ Դպրոցասիրաց-Արեւելեան ընկե-
րութեան վարժարանաց ընդհանուր
Տեսուչ Միքայիլ էֆէնտի Սարբեան,
որուն ասկէ ամիս մը յառաջ Հայաս-
տան երթալը ծանուցեր էինք, ըն-
կերութենէն ստացած հրահանգին
համեմատ վաղարշակեալի մէջ կեղ-
րնակեան վարժարան մը կառուցա-
նելու ձեռնարկեր է : Այս առթիւ
Սարբեան էֆէնտի քննել է գաւա-
ռին միւս քաղաքներն, ինչպէս նաեւ
ժողովրդեան վիճակն, որոյ մանրա-
մասն տեղեկագիրը ձեռք անցուցած
ինքնով կը խոստանամք հրատարակել :

Ալաշկերտցիք յետին թշուառու-
թեան մէջ են. պատերազմին ժամա-
նակ դպրոցք և եկեղեցիք քանդու-
եան ամենն ալ, Յոյս մեծ ունիմք թէ
Դպրոցասիրաց-Արեւելեանի սոյն ձեռ-
նարկը մեծ բարիք պիտի ընէ Ալաշ-
կերտի տառապանքը և անոր ժողո-
վրդեան : Վերջինեալ վարժարա-
նին դասատուներն արդէն ճանաչ
եղած են, քաղաքական ամեն պի-
տոյքներով :

Այս առթիւ անպատեհ չեմք հա-
մարիւր մեր բարեխնայ ընթերցողաց և
համայն ուսումնասէր ազգայնաց ու-
ղարկութեան ներկայել հետեւեալ
հրաւիրագիրը, զոր Արեւելեան-Դպր-
ոցասիրաց ընկերութեան Տնօրէն
խորհուրդն ուղղած է ընկերութեան
անդամոց :

Դ. Պօլիս 10 յուլիս 1879

Ալաշկերտ ընկեր .

Ընկերութեան նպատակին դոր-
ժադրութեան վերաբերեալ ձեռ-
նարկութիւններն օր յօր արեւելի
ընդարձակելով, ամեն ընկեր կողմից
անշուշտ թէ կը թուի իւր փոքր յա-
պահովի դնելու համար պէտք է որ
հաստիքից աղբիւրներն ալ հետզհե-
տէ բաղմունքն : Այս աղբիւրներէն
մին անդամակցութիւնն ըլլալով Տը-
նօրէն խորհուրդս կը խնդրէ որ բա-
րեհաճիք Ձեր ազգասէր բարեկամ-
ներն յայտնել իրեն, որպէս զի խոր-
հուրդս ալ հրաւիրէ զանոնք յան-
դամակցութիւն :

Ընդունեցէք, ազնիւ ընկեր, մեր
յարգանաց հաւատարմք :

Ատենագիր Ատենագիր
Թ. Եֆէնտի Տէրսիմ Ս. Քիւրդէան

Իսկիւտար 8 յուլիս 1879

... Խմբագիր Մատիս լրագրոյ .

Ձեր աղագանակը լրագրին 2569 թը-
ւոյն մէջ նամակ մը տեսայ Տ. Ա. Պօլիս-
ձեանի ստորագրութեամբ, որուն մէջ
խել մը զրպարտութիւններ կան թէ՛ ինձ,
թէ՛ թատրոնի վարչութեան և թէ՛ բոլոր
դերասանաց դէմ : Այսպէս բնաւ կա-
րեւորութիւն մը չէի ուզեր տալ դերա-
սանուհոյ մը խօսքերուն որոյ խելագար
ըլլալը շատերը գիտեն, բայց որովհետեւ
խելիւրը հրապարակ եղած է և ամեն ոք
ի մօտոյ չը ճանաչէր Տ. Արուսեանի վի-
ճակը, և որովհետեւ զրպարտութիւնն ալ
խիստ ծանր է, կ'ստիպուիմ դալ զՁեզ
ձանձրացնել, խնդրելով որ իմ արդարա-
ցումս ևս հաճիք հրատարակել :

Ասկէջ տասն օր առաջ յիշեալ տիկինը
կողմից Տ. Վարդուհան էֆէնտիին թա-
րոնը կողմէ մէկ գիշերուան համար . Տ.
Վարդուհան էֆէնտի անոր վիճակը գիտ-
նալով և զխուս բերելիք փորձանքը
գուցէ կանխատեսելով՝ կը մերժէր իրեն
անուան ներկայացում մը տալ . ես՝ ընկ-
ած այս կնոջ աղաչանքներէն և դժա-
րով իր վիճակին վրայ, համոզեցի Վար-
դուհան էֆէնտիին՝ երեկոյց մը տալ ա-
նոր ներկայացումս դիւրեւ, ճիշդ վարա-
գոյրը բանալնուս միջոցին, Տ. Արուսեան-
կը որ հաղուած սղուած ամենապատ-
րաստ էր բեմի ելլելու, իր յուսացած
բաղմունքները չտեսնելով՝ յանկարծ չի
խաղաղու որոշում կուտայ . . . : Պէտք է
թատերապետ կամ թատերաբեմի տնօրէն
մ'ըլլալ ըմբռնելու համար թէ ինչ սար-
սափելի ժամ է այն՝ երբ առաջին դեր
կատարող դերասան մը յանկարծ այս-
պիսի պիտակ և անպատեհ որոշում մը
կընէ : Մինչդեռ ժողովուրդը դռնէն ան-
ընդհատ ծափահարութեամբ իր անհամ-
բերութիւնը կը յայտնէր և կը պահանջէր
որ վարդուհանը խաղաւ, ևս ներսէն բոլոր
տրամադանութիւնս ու ճարտասանութիւն-
նրս կը թափէի այդ թատրոնը, դերա-
սանութիւնն ու ժողովուրդը անարդող
կնկալն առնել, ժամ մը սորակել պէս դէ-
մը կայեա՞ծ կը պաղտակի՞ կը թախանձէի
զի չընէ այնպիսի բան մը որ նոյն իսկ իր
չահուն ու պատեղին անջնջելի արատ մը
կը բերէ . ինձի յաջորդեց Պ. Մ. Մեծա-
եան և բոլոր դերասանական խումբը, ու-
րոյ ամեն մի անդամ պաղտաւոր և խոս-
տում չէր մնար որ իրեն չընէր, յետոյ
վարդուհանը, որ յանձն կառնէր այն ի-
րիկուան ամբողջ հասցիքը և ընդունած
գրաւն անդամ իրեն ձգել, բուսական է
որ յարգէ ժողովուրդը՝ որ յատկապէս ի-
րեն համար եկած էր այն իրիկուն, և ելլէ
խաղայ . բայց Տ. Արուսեանի միտակ իր
կրից գերի՝ խուլ էր մեր բոլոր աղաչա-
նաց, և անդադար անէ՞ծք և հայհոյանք
կը ստակար իր ազգին դէմ տարկելով
որ իր անունը լսած ատեն աշխարհիս
չորս կողմերէն չէ վազեր իր վրայ սքան-
չանալու և զինքը ծափահարելու : Այս
միջոցիս էր որ ժողովուրդէն մեծ բաղմու-
թիւն մը թատերաբեմը եկան հարցնելու
համար թէ ինչո՞ւ վարդուհանը չըսացուի
և մեր «համբաւաւոր» դերասանուհին իր
արուեստը հոն կատարելուպէս ի դործ
դնելով՝ ջանաց համարել ժողովուրդը թէ
հիւանդ է . բայց զո՞չ կեմք որ նոյն ժո-

ղովուրդը տեսաւ անոր տուած անվեր-
ջանալի 48 ժամ ներկայացումները՝ նախ
նոյն գիշերը օթեակէ օթեակ, երբ մենք
պարտաւորեցանք աղիւն խաղը փոխել
և խօսի Սուրհանդակ ներկայացնել, յե-
տոյ թատրոնին դուռը մինչև առաւօտ,
հետեւ ալ օրը իւսկիւտարի բոլոր թաղե-
րը և նոյն իրիկուն Ս.Տ.Պատէմի մէջ կա-
ռուցանելու հետ տուած ներկայացու-
մը՝ առնելիքի տալիքի խնդրոյ մը համար,
յորում հաղար թիգոյններու դեր կատա-
րեց՝ իրեն բաղձալոյս բաղմութեան մը
առնել :

Պատիւ ծէծի խնդրոյն՝ որում գործա-
կից դիմ կընէ, ասոր և ոչ անգամ կը
պատասխանեմ, վասն զի այս վատ զըր-
պարտութիւնն ունէ է :

Ժողովուրդը մէկ յանգանք մը կրնայ
մեր վրայ դնել, այսինքն է մեր հաւա-
տարմութիւն ընելը խելագարի մը . սա-
կայն եթէ ընդգիւմանայինք մենք իր խնդ-
րած ներկայացման՝ այն ատեն անշուշտ
աւելի պիտի պոռչտէր մեզ դէմ՝ ըսելով
որ անգութ զտուեցանք իր վիճակին
վրայ, զլացանք մենէ խնդրած նպատակը,
եւ : Ուստի մէկ կողմէն իր թախանձան-
քը, միւս կողմէ Բերա տուած ներկա-
յացումն, ուր գոհացուցիչ բաղմութիւն
մը գտնուեալն՝ բաւական լաւ կատարեց
Մէջէսյի դերը, մեզ խաղացին և այն գի-
շերուան փորձանքը բերին մեր զըւսը :

Արդ՝ մենք մեր փորձը ներկայացնե-
լով խառտ կուտանք ուրիշներուն որ ըզ-
գուշանան դերասանուհիէ մը՝ որ իւր
արուեստը միտ տալիք բաժ կատարել զի-
տէ դուրսը՝ քան թէ թատերաբեմի վը-
րայ, եթէ չեն ուզեր մեր զլիւն անցած
փոխորդին իրենց զլիւն վրայ հրաւիրել :

Ընդունեցէք. . . խմբագիր, իմ խո-
րին անխաճութեանցս հաւատարմքն՝ որով
Մնամ . . .
Ս. Թիւրքէան

... Խմբագիր Տէր .

Հոգարարութիւնս պատիւ ունի հը-
րատարակել հետեւեալ Մեծ. աղագանաց
ցանկը, որը բարեհաճեցան յուլիս ամ-
սոյ մէջ իւրեանց նուիրատուութեամբ
միմիտարել Ազգ. Հրահանգնոր հինգ հա-
րիւրի չափ խաղալ պատասխաններն .

Մեծապատիւ էֆէնտիք	
Սարգիս Ֆրնտրեան	խառտ 2 թօլ
Կարապետ Յովսէփեան	գաւա 1 հատ
Յովակիմ Ստամբուլուեան	» 1 »
Անդրէասեան Յովակիմ էֆէնտի	ձեռնամ Օրտուէն բրինձ 2 պարկ
» » » լուբիս	4 »
Տօրթ. Ռափայէլեան Ֆոսէրս (վի- րաբեմական գործիք)	» » »
Ռուբէն Կիւմուշլիբաշի	ռչխար 1 հատ
Տիկ. Համաթի Երեմիայեան	Ֆիլիս 24 զոյգ
Գրիգոր Փանտեան	միս 71 քալ
» » » հաց	100 »
» » » մէճիտ	20 զոյ
Ոմն	28
Մանուկ Աւետիսեան	10
Մարգար տառամադործ	20
Ոմն լիւր. Օսմ. 1 հատ	» » »
Յովսէփեան Կարապետ էֆէն- տիի ձեռնամ ոմն	40
Արթ. Տ. Յովհաննէս Ստամբուլի	20
Չաթալ խմբի արհեստաւորք	28
Բարսեղ Բէկ	20
Գրիգոր Փանտեան	պղինձ 28
Ոմն	20
Յ. Միքիմանեան	40

Յիշեալ նուիրատու Մեծ. էֆէնտիին
բուն ցոյց տուած աւարիական փորձե-
րը գովելով, առ այն հոգարարութեա-
նըս ունեցած խորին շնորհակալքը կը
կը յայտնեմք, և միանգամայն կը յաւե-
լումք խնդրել թէ շնորհ բնեն մերազ-
նեսցէ ի նկատի առնել ժամանակիս անց-
նութիւնը, ընդ որս և Ազգ. Հրահանգ-
նոցի մատակարարութեան անժխտելի հո-
գը, որոյ բարեւը կացութիւնը մի միայն
Մեծ. բարեպաշտից տառապանութեան
կարօտ է :

1879 յուլիս 10 Մնամ . . .
Ի դիմաց Հոգ. Հիւ-
Ատենագիր Ատենագիր
Տ. Կէֆէնտի Ս. Եֆէնտի

Ա. Զ. Գ.

Դպրոցասիրաց-Արեւելեան ընկե-
րութեան ընդհանուր ժողովն նիստ
ունի յառաջիկայ կիրակէ, 15 յու-
լիս, ի կեղ-րոնական վարժարանին
Ղալաթիոյ :

Ատենանք պիտի բացուի ժամ 6 ինչ :

Կը խնդրեմք որ բարեհաճիք ներ-
կայ գտնուի և ընդունել մեր յար-
գանաց հաւատարմքն :

9 յուլիս 1879 Ի դիմաց Ընդհ-
Ղալաթիա ժող. Դպրոց-Արեւ. ընկ-
Ատենագիր Ատենագիր
Թ. Եֆէնտի Տ. Եֆէնտի

ՕՐԱԿԱՐԳ.

1. Ընթերցումն նախորդ նստի ա-
տենագրութեան .
2. Ընթերցումն առ Դիւանն ուղ-
ղեալ թղթակցութեանց .
3. Տեղեկագիր Հայու. քննիչ յանձ-
նաժողովոյ .
4. Եռամսեայ տեղեկագիր Տնօրէն
խորհրդոյ .
5. Կանոնադրական փոփոխութիւնք .
6. Ընտրութիւն Հայու. քննիչ յանձ-
նաժողովոյ :

Ի Լ Ա Ն

Նիգամիյէ նամը աղիզ տէյրիմէն
լէրի հաւաքած ընտան փրկութիւն օ-
լունաճաք պէշ երեւ պին դըյէ քէ-
փէյին էսմանը սիմ մէճիտիյէ իկիրմի
զըշ հիսապը ին նագաէն վէ փէյինէն
վէրիւսպ պատէհու գալաղըրմաք շար-
թը վէ շէրայիթի սայիրէսի իլէ պէ-
հէր դըյէսի եէտի պուշուք փարա-
յա թալիպի էօհաէսինտէ օլուպ թէ-
մուզ րուսմինն օն եէտինճի սալը կիւ-
նիւ թէքարը միւզայիտէսի իճրա օ-
լունաճաղընտան, իշթիրասընա թա-
լիպ օլանլըրն եէվմի մէզքիւրտէ Տա-
րը Ծուրայի ասքըրիյէ կէմլէրի :

12 թէմուզ 1879

Պապը Սէրասքէրի

Նիգամիյէ նամը աղիզ իտարէսի
կիւն շուրութը մուզարբէրէսի իլէ
միւզայիտէ օլունաճաք օթուզ պին
գանթար սամանըն պէհէր գանթարը
օն իքի զըշա օլարաք թալիպի էօհ-
տէսինտէ օլուպ թէմուզը րուսմինն
օն ոլթընճր բաղար իրթէսի կիւնիւ
միւնադաւասը իճրա օլունաճաղըն-
տան, իթայէ թալիպ օլանլըրն եէվ-
մի մէզքիւրտէ Տարը Ծուրայի ասքէ-
րիյէ կէմլէրի :

11 թէմուզ 1879

Պապը Սէրասքէրի

Նիգամիյէ թահիյէ անպարը ի-
չուն շէրայիթը մալիմէ վէ նուսու-
նէսի վէշ իլէ միւզայիտէ մուզար-
րէր օլան պէշ իւզ պին իլէ հէնթէ-
նին հիւս օլունտան միւնադաւասըն-
տա պէհէր քիլէ ասլիթանէսի լիւրայի
Օմանի երեւ զըշա օլմաք իւզրէ ի-
կիրմի եէտի պուշուք զըշա թալիպի
էօհաէսինտէ օլուպ պու ֆիլիպ իս-
զէլայիլին բիւսապընա նագարէն
եւիւքսէք կէօրիւնմէքտէ օլարըն-
տան, իշպու մաճը թէմուզըն իկիրմի
պիրինճի ճուսա իրթէսի կիւնիւ քա-
րարը գալթիս վէրիլէնէ ինտան,
պունտան աշաղը ֆիլիպ իլէ իթայէ
թալիպ օլանլըրն եէվմի մէզքիւրտէն
էվէլ մալիյէ խաղընէի ճէլիլէսինտէ
աշար նէղարթիլնէ միւրաճաւաթ իյ-
լէմէլէրի վէ եէվմի մէզքիւրտէ տալի
միւնադաւաստա հաղըր պուլունմալա-
րը լուղուսի իթար քըլընրը :

11 թէմուզ 1879

Պապը Սէրասքէրի

